ՏԱՏԻԿ-ՊԱՊԻԿ

Նպատակ

Բարելավել **Վանաձորի ծերանոցի** 55 բնակիչների կյանքի որակը՝ նրանց համար ստեղծելով կեցության նպաստավոր պայմաններ:

Գործողություններ

Թարմացնել **Վանաձորի ծերերի տան** անկողնային պարագաները, մասնավորապես՝

- ձմեռային և ամառային ծածկոցներ
- ներքնակներ
- բարձեր
- սպիտակեղեն

Ծրագրի նկարագրությունը

«Վանաձորի տարեցների տունը» կառուցվել է 1993 թվականին՝ Խորհրդային Միության փլուզումից, Արցախի պատերազմից և 1988 թվականին ավերիչ երկրաշարժից կարճ ժամանակ անց, երբ շատ երիտասարդներ աշխատանք գտնելու նպատակով երկրից արտագաղթեցին՝ մեծահասակներին թողնելով առանց ընտանեկան աջակցության: **«Վանաձորի տարեցների տունը»** կառուցվեց այդ խնդիրը լուծելու համար եւ օգնելու նրանց, ովքեր դրա կարիքն ունեին: **Հայ օգնություն ֆոնդը** սկսեց աջակցել **«Վանաձորի տարեցների տանը»** 2002 թվականին: **«Վանաձորի տարեցների տուն»** Հայաստանում մեծահասակների համար նախատեսված միակ մասնավոր հաստատությունն է, որը կառավարության կողմից ընդունվել է որպես տարեցներին ծառայություններ մատուցող հաստատություն: Հաստատության հիմնական նպատակն է՝

- սոցիալապես ծանր վիճակում գտնվող մեծահասակներին ապահովել լիարժեք խնամքով և ապրուստի բարվոք պայմաններով,
- աջակցել և օժանդակել մեծահասակներին, որ նրանք ապրեն արժանապատվորեն և զգան հասարակության լիարժեք անդամ:

«Վանաձորի տարեցների տունը» հոգում է իր բնակիչների բոլոր կարիքները՝ տրամադրելով երեքանգամյա սննդարար ուտելիք, առողջական խնամք, հոգեբանական խորհրդատվության, ինչպես նաև կազմակերպում է տարատեսակ միջոցառումներ, որպեսզի մեծահասակները իրենց ներգրավված զգան և համայնքի մի մասը կազմեն:
Քանի որ **«Վանաձորի տարեցների տան»** բնակիչների թիվը ժամանակի հետ ավելացել է, իսկ պայմանները մնացել են նույնը, նոր անկողնային պարագաների կարիք է առաջացել, ներքնակներ, բարձեր և տաք ձմեռային ծածկոցներ:

«Այո»-ում մենք հավատացած ենք, որ ավագ սերնդի ներկայացուցիչները պետք է ունենան ապրեն արժանապատիվ կյանք: **«Վանաձորի տարեցների տան»** բնակիչներից շատերը վետերաններ են, մարդիկ, որոնք մեծացրել են մեզ և օգնել դառնալ այն, ինչ կանք հիմա: Մենք կարծում ենք, որ պետք է հատուցել և հոգ տանել նրանց մասին ճիշտ այնպես, ինչպես նրանք են դա արել մեզ համար:

Միացեք մեզ և ասեք Այո՛ տարեցներին արժանապատիվ կյանք ապահովվելուն:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Վերմակ սինտիպոնից ձմեռային	55	9,660	531,300	1,100
Վերմակ սինտիպոնից ամառային	55	7,245	398,475	825
Անկողնու սպիտակեղեն՝ բարձի երես, սավան, վերմակի երես	110	9,660	1,062,600	2,200
Բարձ	55	4,830	265,650	550
Ներքնակի երես	55	12,075	664,125	1,375

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$6,050**